

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ

ԱԽ-15-Ո-10

2016 թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՀԵՆՐԻԿ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Մկրտումյանի

մասնակցությամբ՝ ԱԽ անդամներ
Գ. Խանդանյանի, Ա. Խաչատրյանի,
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,
Ս. Օհանյանի

Ռ. Բարսեղյանի, Ա. Դարբինյանի,

մասնակցությամբ՝ դատավոր

Հ. Դարբինյանի

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի
Էթիկայի եւ կարգապահական հարցերի
հանձնաժողովի անդամներ

Մ. Մարտիրոսյանի, Մ. Պապոյանի

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2016 թվականի հուլիսի 27-ին Երեւան քաղաքում՝ դռնփակ նիստում, քննարկելով ՀՀ
Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի
դատավոր Հ. Դարբինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի
հանձնաժողովի 20.06.2016թ. թիվ N-ԷԿ-2/2016 որոշմամբ ՀՀ Արարատի եւ Վայոց ձորի
մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Հ. Դարբինյանի
նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել քաղաքացի Հարություն
Կարապետյանի դիմումը:

2. Կարգապահական խախտման վերաբերյալ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը.

Ըստ եզրակացության՝

"ՀՀ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Հ. Դարբինյանի վարույթում է գտնվում թիվ ԱՎԴ3/1098/02/15 քաղաքացիական գործն ըստ հայցի Հարություն Կարապետյանի ընդդեմ Վարդուհի Սաֆարյանի՝ 24.06.2016թ. կնքված Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Վարդան Զորավար փողոցի թիվ 17 տունն օտարելու գործարքն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Թիվ ԱՎԴ3/1098/02/15 քաղաքացիական գործով հայցվոր Հ. Կարապետյանի կողմից 25.03.2016թ. դատավոր Հ. Դարբինյանին ներկայացվել է ինքնաբացարկի միջնորդություն:

Դատարանի դատավոր Հ. Դարբինյանը 06.04.2016թ. կայացված "Ինքնաբացարկի մասին միջնորդությունը քննության առնելու մասին" որոշմամբ մերժել է ներկայացված միջնորդությունը՝ միաժամանակ որոշման մեջ նշելով.

"Ինչ վերաբերում է միջնորդության մեջ նշված այն փաստարկին, թե պատասխանողն ինչ-որ անձի նախկինում պարտքով գումար է տվել, հիմա էլ փորձում է ստանալ, սակայն չի կարողանում, եւ ըստ հայցվորի՝ դա միգուցե պայմանավորված է դատական նիստերը հետաձգելու հետ, դատարանը փաստում է, որ մեղմ ասած նշվածը վերաբերում է հայցվորի հիվանդագին երեւակայությանը, (...)":

ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ դատարանում ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է համբերատար, արժանապատիվ եւ կիրթ վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե, ինչպես նաեւ նմանատիպ վերաբերմունք պահանջել դատարանի աշխատակազմից եւ այլ անձանցից, որոնք դատավորի ղեկավարության կամ վերահսկողության ներքո են:

"Դատավորի վարքագծի կանոնները" սահմանելու մասին" ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի 19.02.2016թ. թիվ 01-Ն որոշման 2-րդ կանոնի համաձայն՝ "Դատավորը պարտավոր է բարձր պահել իր պատիվն ու արժանապատվությունը եւ խուսափել այն ամենից, ինչը կարող է արատավորել դատական իշխանության հեղինակությունը, նվազեցնել հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ, վնաս հասցնել դատավորի համբավին, կասկածի տակ դնել նրա օբյեկտիվությունը եւ անկախությունն արդարադատություն իրականացնելիս: (...)":

Նույն որոշման 12-րդ կանոնի համաձայն՝ "Դատավորը պետք է լինի արժանապատիվ, համբերատար եւ բարեկիրթ, հարգալից վերաբերմունք դրսևորի գործով կողմերի, դատավարության այլ մասնակիցների, գործընկեր դատավորների, դատարանի աշխատակազմի եւ բոլոր այն անձանց հանդեպ, ում հետ առնչվում է, իր համար ընդունի այնպիսի

սահմանափակումներ, որոնք կապահովեն նրա հավասարակշռվածության ու արդարամտության հասարակական ընկալումը: (...):"

Վերոգրյալի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Դատարանի դատավոր Հ. Դարբինյանը, թիվ ԱՎԴՅ/1098/02/15 քաղաքացիական գործով 06.04.2016թ. կայացված "Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին" որոշման մեջ գործածելով "(...) դատարանը փաստում է, որ մեղմ ասած նշվածը վերաբերում է հայցվորի հիվանդագին երեւակայությանը, (...)" արտահայտությունը, դրսեւորել է անբարեկիրթ վերաբերմունք գործով հայցվորի նկատմամբ՝ արատավորելով դատական իշխանության հեղինակությունը:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ Դատարանի դատավոր Հ. Դարբինյանի կողմից թույլ են տրվել դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտումներ, որոնք ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք են:

Միաժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ դատավորի վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտումը չի կարող թույլ տրվել դատավորի մեղքի բացակայությամբ: Տվյալ պարագայում դատավորի մեղավորությունն առկա է, քանի որ նա, դրսեւորելով անբարեկիրթ վերաբերմունք գործով հայցվորի նկատմամբ, թույլ է տվել դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտումներ":

3. Դատավորի բացատրությունում բերված փաստարկները ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

Դատավոր Հ. Դարբինյանը ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովին ներկայացրել է բացատրություն, որում մասնավորապես նշել է.

"Նախ հայտնեմ, որ վարույթումս եղած քաղաքացիական գործի քննության ողջ ընթացքում դիմող Հարություն Կարապետյանին չեմ տեսել, նիստերին նա չի ներկայացել, հետեւաբար ի պաշտոնե գործելիս չեմ էլ շփվել: Ի գիտություն տեղեկացնեմ, որ գործի ելքով իմ կողմից կայացված վճռի բողոքարկման ժամկետը լրանում է 27.06.2016 թ-ին, այս պահի դրությամբ դեռեւս վերաքննիչ բողոք դիմողը չի ներկայացրել:

Նշեմ, որ Հարություն Կարապետյանին վիրավորելու անգամ մտադրություն չի եղել, "հիվանդագին երեւակայություն" բառերը նշելիս միայն փորձել եմ նրան զգոնացնել, ուշադրություն հրավիրել նրա անիրական, իմ կարծիքով նաեւ դատարանի հեղինակությանն ուղղված ոչ նորմալ եւ ոչ պատշաճ հետեւությունների ու փաստարկների վրա եւ կանխել արդարադատություն իրականացնելիս որեւէ անօրինական եւ անհիմն ազդեցություն: Եթե Հարություն Կարապետյանը հավատար իր իսկ փաստարկներին, ապա կդիմեր նաեւ համապատասխան մարմիններին:

Փաստեմ, որ վիրավորանք հասկանում եմ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի հիմքով, որի բովանդակությանը չեմ անդրադառնում:

Ըստ Վ. Ա. Սահակյանի, Վ. Մ. Սահակյանի հոմանիշների եւ ինտերնետում առկա բառարանների՝ "հիվանդագին երեւակայություն" նշանակում է ոչ նորմալ, անառողջ պատկերացում, ենթադրություն, անիրական բան, ֆանտազիա:

Ըստ էության, Հարություն Կարապետյանն իր իրականությանը չհամապատասխանող փաստարկներով շոշափել է դատավորի համբավը, կասկածի տակ դրել իմ օբյեկտիվությունը եւ անկախությունն արդարադատություն իրականացնելիս:

Ինչ վերաբերում է նշված արտահայտությունը դատական ակտում նշելուն, քաջատեղյակ եմ, նաեւ գիտակցում եմ, որ չպետք է նշվեր այն պարզ պատճառով, որ դատական ակտերն ունեն իրենց ձեւին ու բովանդակությանն առաջադրվող պահանջներ, կոնկրետ հարց եւ խնդիր են լուծում:

Դատարանի կողմից 06.04.2016թ. կայացված "Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին" որոշման մեջ իմ կողմից օգտագործված արտահայտության համար խնդրում եւ Հանձնաժողովից ակնկալում եմ ներում, Հանձնաժողովի այդ փաստարկի կապակցությամբ գնահատականը համարում եմ օբյեկտիվ":

4. Կարգապահական պատասխանատվության հարցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետեւյալ փաստը.

ՀՀ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը (նախագահող դատավոր՝ Հ. Դարբինյան) թիվ ԱՎԴ3/1098/02/15 քաղաքացիական գործով 06.04.2016թ. կայացված "Ինքնաբացարկի մասին միջնորդությունը քննության առնելու մասին" որոշմամբ մերժել է գործով հայցվոր Հ. Կարապետյանի կողմից ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը՝ միաժամանակ որոշման մեջ նշելով.

"Ինչ վերաբերում է միջնորդության մեջ նշված այն փաստարկին, թե պատասխանողն ինչ-որ անձի նախկինում պարտքով գումար է տվել, հիմա էլ փորձում է ստանալ, սակայն չի կարողանում, եւ ըստ հայցվորի՝ դա միգուցե պայմանավորված է դատական նիստերը հետաձգելու հետ, դատարանը փաստում է, որ մեղմ ասած նշվածը վերաբերում է հայցվորի հիվանդագին երեւակայությանը, (...)":

5. Խորհրդի պատճառաբանությունները եւ եզրահանգումը.

Քննարկելով ՀՀ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) դատավոր Հ. Դարբինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամի զեկույցը, դատավորի

բացատրությունը, ուսումնասիրելով վարույթի նյութերը եւ հետազոտելով ապացույցները՝ Խորհուրդը գտնում է, որ.

ՀՀ դատական օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ "Դատավորը պետք է ձգտի իր գործունեությամբ եւ վարքագծով ապահովել դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը, ինչպես նաեւ նպաստել դատարանի նկատմամբ վստահության եւ հարգանքի ձեւավորմանը: Վարքագծի կանոնների մեկնաբանությունն ու կիրառումը պետք է նպաստեն այդ նպատակի իրականացմանը":

"Դատավորի վարքագծի կանոնները" սահմանելու մասին" ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի 19.02.2016թ. թիվ 01-Ն որոշման 2-րդ կանոնի համաձայն՝ "Դատավորը պարտավոր է բարձր պահել իր պատիվն ու արժանապատվությունը եւ խուսափել այն ամենից, ինչը կարող է արատավորել դատական իշխանության հեղինակությունը, նվազեցնել հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ, վնաս հասցնել դատավորի համբավին, կասկածի տակ դնել նրա օբյեկտիվությունը եւ անկախությունն արդարադատություն իրականացնելիս: (...)":

ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ դատարանում ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է համբերատար, արժանապատիվ եւ կիրթ վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե, ինչպես նաեւ նմանատիպ վերաբերմունք պահանջել դատարանի աշխատակազմից եւ այլ անձանցից, որոնք դատավորի ղեկավարության կամ վերահսկողության ներքո են:

"Դատավորի վարքագծի կանոնները" սահմանելու մասին" ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի 19.02.2016թ. թիվ 01-Ն որոշման 12-րդ կանոնի համաձայն՝ "Դատավորը պետք է լինի արժանապատիվ, համբերատար եւ բարեկիրթ, հարգալից վերաբերմունք դրսեւորի գործով կողմերի, դատավարության այլ մասնակիցների, գործընկեր դատավորների, դատարանի աշխատակազմի եւ բոլոր այն անձանց հանդեպ, ում հետ առնչվում է, իր համար ընդունի այնպիսի սահմանափակումներ, որոնք կապահովեն նրա հավասարակշռվածության ու արդարամտության հասարակական ընկալումը: (...)":

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորը, օժտված լինելով արդարադատություն իրականացնելու բացառիկ լիազորությամբ, իր վարքագծով հասարակության մոտ պետք է համոզմունք ձեւավորի, որ կողմերը դատարանում հասնելու են արդարադատության:

Խորհուրդն իր 2007 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱԽ-6-Ո-16 որոշմամբ նշել է, որ կողմերը կամ դատական գործընթացի մյուս մասնակիցները հաճախ չեն կողմնորոշվում, թե որ փաստերն ու իրադարձություններն են կարելու գործի լուծման համար, եւ կարող են բացատրություն, ցուցմունք տալ կամ ճառով հանդես գալ երկար, խոսել գործի հետ չկապված կամ դրա լուծման համար էական նշանակություն չունեցող հանգամանքների մասին: Նման դեպքերում դատավորը, առաջարկելով ելույթ ունեցողին մնալ հայցի շրջանակներում եւ

բացատրություն տալ գործի փաստական հանգամանքների վերաբերյալ, չպետք է դուրս գա փոխադարձ հարցանքի սահմաններից, ստեղծի տպավորություն, թե չի ցանկանում տիրապետել գործի մանրամասները, կողմնակալ է եւ գործի ելքով շահագրգռված՝ կողմի նկատմամբ դրսևտրելով կոպիտ եւ անթույլատրելի վերաբերմունք, որը խարխլում է դատավորի նկատմամբ հարգանքը:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Դատարանի դատավոր Հ. Դարբինյանը թիվ ԱՎԴՅ/1098/02/15 քաղաքացիական գործով 06.04.2016թ. կայացված "Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին" որոշման մեջ գործածել է "(...) դատարանը փաստում է, որ մեղմ ասած նշվածը վերաբերում է հայցվորի հիվանդագին երեւակայությանը, (...)" արտահայտությունը:

Վերոգրյալի արդյունքում Խորհուրդը գտնում է, որ Դատարանի դատավոր Հ. Դարբինյանը, թիվ ԱՎԴՅ/1098/02/15 քաղաքացիական գործով 06.04.2016թ. կայացված "Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին" որոշման մեջ գործածելով գործով հայցվորի հասցեին ուղղված բացասական որակում բովանդակող արտահայտություն, դրսևտրել է անբարեկիրթ վերաբերմունք վերջինիս նկատմամբ, որի արդյունքում թույլ է տվել դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտումներ:

Միաժամանակ Խորհուրդը գտնում է, որ սույն գործով կիրառելի է ՀՀ դատական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ եթե Արդարադատության խորհուրդը նպատակահարմար չի գտնում դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժի միջոց, ապա կարող է բավարարվել հարցի քննարկմամբ՝ որոշմամբ ամրագրելով կարգապահական պատասխանատվության հիմքերի առկայությունը եւ կարճելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը:

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Հ. Դարբինյանը փորձառու դատավոր է (պաշտոնավարում է 2001 թվականից) եւ աչքի է ընկել օրինավոր վարքագծով:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ, 161-րդ հոդվածներով, 162-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Հ. Դարբինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճել՝ բավարարվելով հարցի քննարկմամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ ենթակա չէ բողոքարկման:

Արդարադատության խորհրդի անդամներ՝ Ռ. Բարսեղյան

Ա. Դարբինյան
Գ. Խանդանյան
Ա. Խաչատրյան
Գ. Ղազինյան
Ս. Չիչոյան
Ե. Սողոմոնյան
Վ. Ստեփանյան
Ս. Օհանյան